



Փ Ա Ր Ո Մ *Paros*

ISSUE 83 JUNE / ԹԻԻ 83 ՅՈՒՆԻՍ 2024

NEWSLETTER OF THE DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AUSTRALIA & NEW ZEALAND

Թեմական Լուրեր



Շբ., 1 Յունիս – Մաշա Մնջոյեան: Արուեստագիտուհի մը, որ վերջին հինգ տարիներուն աստիճան առ աստիճան Աւստրալահայութեան մօտ մասնաւորապէս, իսկ Աւստրալիոյ մէջ ընդհանրապէս դարձաւ հանրաճանօթ, շնորհիւ իր ձայնային տաղանդին: Յունիս 1-ին Մաշան համերգ մը տուաւ Սիտնիի Orpheus Theatre Cremorne սրահին մէջ, եւ ներկայացուց փունջ մը Ուիթնի Հիւսթընի երգերէն: Ընկերակցութեամբ Տէր Աւետիս Քահանայ Համբարձումեանի, Սրբազան հայրը ներկայ գտնուեցաւ բարձրորակ այս համերգին եւ հպարտօրէն գնահատեց Մաշայի տաղանդը, որով ան կարողացած էր գերազանց բժախնդրութեամբ մեկնաբանել Ուիթնի Հիւսթընի ինքնուրոյն երգերը: Փարոսի խմբագրութիւնը կը շնորհաւորէ Մաշան իր բոլոր ձեռքբերումներուն համար, որոնց ետին կանգնած է այլ հայուհի մը՝ Աննա Յովհաննիսեանը:



Կիր., 2 Յունիս – Սուրբ Յարութիւն առաջնորդանիստ եկեղեցոյ մէջ մատուցուեցաւ Պատարագ, պատարագիչ՝ Արժ Տէր Աւետիս Քահանայ Համբարձումեան: Տօնն էր Սուրբ Էջմիածնի: Սրբազան հօր հանդիսապետութեամբ տեղի ունեցաւ Հայրապետական Մաղթանք: Ողիղ օղակայանէն եկեղեցի փութացած էր Լեւոն Սարկաւազ Օսիպով, որ նաեւ ԱՄՆ Սիաթլ քաղաքի Սուրբ Յարութիւն եկեղեցոյ ծխական խորհուրդին ատենապետն է: Սրբազան հայրը ներկայացուց Բարեշնորհ Սարկաւազը, որ իր կարգին մասնակցեցաւ Պատարագին, ծառայեց խորանին եւ կատարեց Վերաբերումը: Սրբազան հայրը յաւուր պատշաճի քարոզեց:

Գշ., 4 Յունիս – Առաւօտուն, ընկերակցութեամբ Դիւանապետ Նշան Պասմաճեանի, Սրբազան Հայրը մասնակցեցաւ Նիւ Սաութ Ուելյը Էքիւմենիք Խորհուրդի Եկեղեցապետերու վեցամսեայ ժողովին, որ տեղի ունեցաւ նորակառոյց Հնդիկ Bethel Mar Thoma Church, Horsley Park- ի մէջ:



Խորհուրդի նախագահ Անասթասիոս Պօզիքիս քահանայ հոր բացման աղօթքն էլ հիւրընկալ Մաթեո Իփըն քահանային բարի գալուստն էտք ժողովը անցաւ օրակարգի քննարկման: Ժողովը լսեց ընդհանուր քարտուղար Տէյվիտ Բոզի տեղեկագրութիւնը Խորհուրդի տարած վեցամսեայ գործունէութեան եւ զայն գնահատելի գտաւ: Ժողովականները տեղեկութիւն տուին իրենց եկեղեցիներու անցուդարձերուն մասին: Ժողովին ներկայացուցաւ նաեւ Խորհուրդի գործադիր մարմնին կողմէ (Executive Board) առաջարկուած նոր ռազմավարական ծրագիրը (Council's New Strategic Plan), որուն բովանդակութիւնը գնահատեցաւ բոլորին կողմէ:

Դադարին, Մաթեո քահանան առաջնորդեց ժողովականները դէպի Բեթել Մար Թումա եկեղեցի եւ բացատրութիւն տուաւ եկեղեցոյ եւ Մար Թումայի ծիսակատարութեան մասին, որ կը կատարուի Մալէալամ լեզուով: Ժողովին զեկուցեց Ուուրունկայի Եունայթինկ Եկեղեցոյ հոգեւոր հովիւ Մանաս Դօշ քահանան նիւթ ունենալով «Միջկրօնական երկխօսութեան կարեւորութիւնը» (*Importance of Interfaith Dialogue*): Սրբազան հօր թելադրութեամբ անգլերէն բաժինին մէջ կը հրապարակենք Դօշ քահանային հետաքրքրական զեկուցագիրը, նիւթ *Importance of Interfaith Dialogue*: Տես էջ 21: Տեղի ունեցաւ կարծիքներու փոխանակում եւ կատարուեցան շինիչ առաջարկներ: Այս արդիւնաւետ ժողովը փակուեցաւ Հայկազուն Սրբազան հօր աղօթքով:



Գշ., 4 Յունիս - Թեմական Պատգամաւորական Ժողովէն երկու շաբաթ էտք տեղի ունեցաւ Թեմական հերթական Ժողով նախագահութեամբ Սրբազան հօր: Ժողովը լսեց Սրբազան հօր միամսեայ գործունէութեան եւ Աւստրալիոյ երեք ծուխերու հոգեւոր հովիւներուն եւ աստենապետներուն զեկուցումներն ու առաջարկները: Կատարուեցաւ ընդհանուր գնահատում 18 Մայիսին Մելպուրնի մէջ տեղի ունեցած Թեմական Պատգամաւորական Ժողովին: «Առաջնորդարանի Բարեկամներ»ուն ի պատիւ տրուած քրքրէլլին անդրադառնալով, ժողովը յայտնեց իր գոհունակութիւնը եւ դրուատանքով արտայայտուեցաւ կազմակերպչական աշխատանքին մասին: Ժողովը նաեւ իր գնահատանքը յայտնեց Առաջնորդարանին տարած յարաբերական աշխատանքներուն համայնքային թէ կքիւմէնիք բնագաւառներուն մէջ:

SCAN FOR VIDEO TOUR

PERFECT FOR PARTIES, FUNCTIONS, LECTURES & CLASSES

ARARAT CULTURAL CENTRE

- Newly Upgraded Hall
- Seats 120 People
- Full Commercial Kitchen
- Outdoor Entertainment Area
- Multimedia System
- Men's and Women's Bathrooms
- Air Conditioning
- Free Parking
- Hall Area 190m²

3 DRATTAN CRES, FRENCHS FOREST NSW 2066

FOR ALL ENQUIRES PLEASE CONTACT
EMAIL: ARARATCULTURALCENTRE@GMAIL.COM
PHONE: 0481 268 181

Դշ., 5 Յունիս - Կէսօրէ առաջ, Սրբազան հայրը նախագահեց խորհրդակցական ժողովի մը որ կայացաւ Թեմական Խորհուրդի, Կալուածոց Յանձնախումբի եւ Արարատ Կեդրոնի Յանձնախումբի ներկայացուցիչներուն միջեւ: Ժողովը առաւ որոշումներ առնչուած մշակուած ծրագիրներու գործնականացման, յօգուտ Արարատ Կեդրոնի վերաշխուժացման:



Գնահատելի նախաձեռնություն Տանիել Եպիսկոպոսին կողմէ:

Շբ., 8 Յունիս – Սրբազան հայրը, որպէս Հնդկաստանի եւ Ծայրագոյն Արեւելքի Հայրապետական Պատուիրակ, ընդառաջելով Սինկափուրի Հայ Առաքելական Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ ինամակալ մարմնին, մեկնեցաւ Սինկափուր, ուր յիսունի շուրջ հաւատացեալներու ներկայութեան Կիրակի 9 Յունիսին մատուցեց Պատարագ: Սրբազան հայրը նաեւ կատարեց մկրտութիւն: Ան վերադարձաւ 11 Յունիսին:

Շբ., 8 Յունիս – Որպէս ներկայացուցիչ Սրբազան հօր, Դիւանապետ Նշան Պասմաճեան մասնակցեցաւ ճաշկերոյթի մը կազմակերպուած ԷՔՈՒԱ (Eastern Christian Welfare Australia – ECWA) կազմակերպութեան կողմէ, որ տեղի ունեցաւ Մելբայթ Կաթոլիկ Առաջնորդարանի սրահին մէջ, Կրինէլքըր, բարի գալուստ մաղթելու համար վերջին վեց ամսուան ընթացքին Սուրիայէն եւ Լիբանանէն գաղթած ընտանիքներուն: Այս հաստատութիւնը կը գործէ ԱՄԷՔ-ի հովանաւորութեան ներքոյ, որուն





Դշ., 5 Յունիս – Ընկերակցութեամբ Դիւանապետին, Սրբազան հայրը ներկայ գտնուեցաւ Ղպտի Առաջնորդ Տանիել Եպիսկոպոսին սիրոյ սեղանին *Քիքին Ին* ճաշարանին մէջ: Ներկայ էին ԱՄԷՔ-ի եկեղեցապետերու մեծամասնութիւնը: Քրիստոնէական սիրոյ մթնոլորտին մէջ եկեղեցապետերը քննարկեցին զանազան հարցեր Մերձաւոր Արեւելքի քրիստոնէական եկեղեցիներուն առնչւած եւ կատարեցին շինիչ ու գործնական առաջարկներ: Քննարկման նիւթ դարձաւ Նիկիոյ Տիեզերական ժողովին 1700-ամեակի տօնակատարութիւնը 2025 թուականին: Յիշեցնենք որ այդ Տիեզերական ժողովին է որ վաւերացուած է Նիկիոյ Հանգանակը (Հաւատամք ի մի Աստուած):

ընդհանուր պատասխանատուն նշանակուած է Գերյարգելի Հայր Բարսեղ Վարդապետ Սուսանեան: Բարի գալստեան խօսք արտասանեց Հայր Բարսեղ իսկ ԱՄԷՔ-ի կողմէ քաջալերական եւ դաստիարակչական խօսքով հանդէս եկաւ ԱՄԷՔ-ի նախագահ Գերաշնորհ Բողոք Եպիսկոպոս Բապայաթ: Ներկայ էին նաեւ Գաղթեական (Chaldean Church) եկեղեցւոյ Առաջնորդ Ամէլ Շամոն Նոնա Արքեպիսկոպոսը, Անտիոքեան Ուղղափառ եկեղեցւոյ (Antiochian Orthodox church) Մետրոպոլիտ Պասիլիոս Արքեպիսկոպոս Քուսսիէն, Արեւելքի Հին Եկեղեցւոյ (Ancient Church of the East) ներկայացուցիչ Էնա Քահանան եւ Մարոնիթ եկեղեցւոյ ներկայացուցիչ Մարսելիսօ Վարդապետը:

Գ2., 25 Յունիս – Համաշխարհային Եկեղեցիներու Խորհուրդի Ընդհանուր Քարտուղար Դոկտ Փրոֆ Ճերի Փիլլայ Քահանան այցելեց Աստրալիա եւ իրեն ի պատիւ Նիւ Սաութ ուելզի Էքիմենիք Խորհուրդը կազմակերպեց Էքիմենիք աղօթք Ս. Սթիվընս Եունայթինկ Եկեղեցոյ մէջ Սիտնի: Ընկերակցութեամբ Արժ Տեր Աւետիս Քահանայ Համբարձումեանի, Սրբազան հայրը մասնակցեցաւ աղօթքին եւ կարդաց օրուան յատկացուած Աւետարանը: Աղօթքն ետք տեղի ունեցաւ հիւրասիրութիւն: Ձեռնարկին մասնակցեցան տարբեր կրօններու ներկայացուցիչ հոգեւորականներ:



Գ2., 26 Յունիս – Առաջնորդարանի կազմակերպած Յունիս ամսուան առցանց դասախօսութիւնը տեղի ունեցաւ այս գիշեր նախագահութեամբ Սրբազան հօր: Նիւթ «Առցանց Շրջապտոյտ Երուսաղէմի Մէջ – Virtual Tour of Jerusalem»: Ձեռնարկը քիչ մը Էքիմենիք բնոյթ ունէր, տրուած ըլլալով որ յիսունի շուրջ մասնակիցները Հայեր եւ ոչ Հայեր էին, տարբեր յարանուանութիւններէ Սիտնիէն, Մելբուրնէն, Նոր Զելանտայէն, Հայաստանէն, Պէլրուօքէն, Եւրոպայէն եւ այլն: Նիւթը անգլերէն լեզուով ներկայացուց, ուղիղ Նիւ Եորքէն, Դոկտոր Փրոֆէսըր Բոպերթա Ըրվայն : Սրբազան հօր բացման աղօթքն ետք, հանդիսավար Նշան Սարկաւազ Պասմաճեան ներկայացուց դասախօսուհին. Տիկին Բոպերթա Ըրվայն Հայերէն ուսումնասիրութեանց փրոֆէսըր է, կը դասաւանդէ արդի Հայերէն եւ Գրաբար, Հայ եկեղեցոյ պատմութիւն եւ աստուածաբանութիւն Սուրբ Ներսէս Ընծայարանի մէջ Արմոնք, Նիւ Եորք: Ան բախտաւորութիւնը ունեցած է երկար տարիներ աշակերտելու հոգեւոր Նորայր Արքեպիսկոպոս Պողարեանի, մասնագէտ եւ ինամատար հայկական ձեռագիրներու Սրբոց Յակոբեանց Վանքի մէջ Երուսաղէմ, ինչպէս նաեւ Կիւրեղ Եպիսկոպոս Գարիկեանի, Երուսաղէմի Պատրիարքարանի սուրբ վայրերու մէջ ճշդուած սահմաններու պահպանման ընդհանուր վերակացու: Դոկտ Ըրվայն երկար տարիներ դասաւանդած է Երուսաղէմի Սրբոց Թարգմանչաց Վարժարանին ինչպէս նաեւ Երուսաղէմի տարբեր կրթական հաստատութիւններու մէջ, ի միջի այլոց Հրէական Համալսարանին (Hebrew University) մէջ:





Ապա վերադառնալով ԱՄՆ, ան կը միանայ Ս. Ներսէս Ընծայարանի ուսուցչական կազմին: Իր հետազոտութիւնները գլխաւորաբար կատարած է Երուսաղէմի Հայ համայնքին, միջնադարեան Հայ եկեղեցոյ պատմութեան եւ հայկական եկեղեցականութեան հայրագիտական արտայայտութեան մասին: Դոկտ Ըրվայն իր դոկտորական վկայականը ստացած է Քոլիւմբիա Համալսարանէն, Նիւ Եորք, ուր աշակերտած է հանգուցեալ Նինա Կարսոյեանին, ֆրանսա ծնած ամերիկահայ պատմագէտին, որուն մասնագիտութիւնն էր Հայոց եւ Բիւզանտական պատմութիւնը: Ի դէպ, Դոկտ Կարսոյեան մահացաւ 2022-ին, 99 տարեկանին: Դոկտ Ըրվայն հեղինակած է բազմաթիւ

գրքեր, անգլերէն լեզուով, որոնցմէ կը յիշատակուին **«Worship Traditions in Armenia and the Neighbouring Christian East»**, **«The Blessing of Blessings»**, **«The Armenians in Jerusalem and the Holy Lands»** եւայլն: Մէկ ժամ անընդհատ Փրոֆէսըրը իր մասնագէտի բացատրութիւններով հնայեց մասնակիցները, որոնք հարցուցին հարցումներ եւ կատարեցին գնահատականներ: Դասախօսութիւնը աւարտեցաւ Հայկազուն Սրբազան հօր օրհնութեան եւ գնահատանքի խօսքերով եւ փակման աղօթքով: Դասախօսութեան մանրամասնութեանց մասին իմանալու համար կը յանձնարարուի սեղմել հետեւեալ յղումին վրայ [Virtual Tour of Jerusalem.mp4 - Google Drive](#) զայն կարենալ ըմբռնելու համար: Խանդավառուած տիրող դրական մթնոլորտէն, Տիկին Ըրվայն խոստացաւ երկրորդ առցանց «Շրջապտոյտ ի Երուսաղէմ» մը ներկայացնել յառաջիկայ ամիսներուն: Փարոսի խմբագրական կազմը, որ լման կազմով մասնակից էր դասախօսութեան, մեծապէս կը գնահատէ Դոկտ Ըրվայնի ծով գիտելիքները Երուսաղէմի մասին եւ որ իր բազմաբնոյթ դասախօսութիւններով զանոնք սեփականութիւն կը դարձնէ Հայուն թէ ոչ Հայուն:



ՀԱՐՑԱԶՉՐՈՅՑ ՊՐՆ ՍՏԵՓԱՆ ԳՐԳԵԱՇԱՐԵԱՆԻ ՀԵՏ ԱՐԱՐԱՏ ԿԵԴՐՈՆԻ ՄԱՍԻՆ



Տրենչա Տօրէսթի մեջ գտնուող Արարատ Կեդրոնը մի քանի տարիէ ի վեր երկար ժամկետով վարձուած է Թեմական Խորհուրդին կողմէ: Կեդրոնը ամբողջութեամբ վերանորոգուեցաւ եւ ի սպաս դրուած է շրջանի բնակչութեան ընդհանրապէս եւ Հայ կազմակերպութեանց եւ ընտանիքներու մասնաւորապէս: Այս առիթով Փարոս հարցազրոյց մը ունեցաւ Թեմական Խորհուրդի փոխատենապետ Պրն Ստեփան Գրգեաշարեանին հետ:

Փարոս - Պրն Գրգեաշարեան, կրնայի՞ք հակիրճ տեղեկութիւն տալ Արարատ Կեդրոնի անցեալի մասին
Պրն Գրգեաշարեան – Արարատ Կեդրոնը կը պատկանէր Արարատ Կազմակերպութեան, որ հիմնուած էր Թուրքիայէն Սիսնի գաղթած հայորդիներու կողմէ: Մարգա-մշակութային աշխուժ կազմակերպութիւն մըն էր, որ նաեւ ունէր իր ֆութպոլի խումբը: Դժբախտաբար, անդամներու թիւը այնքան նուազում արձանագրեց, որուն իբր հետեւանք կեդրոնը չկարողացաւ ծախսերը փակել: Կեդրոնը վարձուած էր կառավարութենէն եւ *Crown land* էր:

Փարոս - Մի քանի տարի առաջ Թեմական Խորհուրդը վարձեց Կեդրոնը: Ի՞նչ նպատակով:
Պրն Գրգեաշարեան – Թեմական Խորհուրդը որոշում առաւ շարունակել վարձակալութիւնը, յատկապէս նկատի առնելով որ Եկեղեցին այդքան մեծ սրահ չունէր եւ կեդրոնը մօտիկ էր Տօրէսթվիլին, Տրենչա Տօրէսթին, Տէյվիստընին եւ շրջակայքի հայ բնակչութեան: Նաեւ կը թուի թէ առնուած որոշումը ճիշդ էր ժամանակային իմաստով, տրուած ըլլալով որ Հայ համայնքի գլխաւոր կեդրոնը փակ է մի քանի տարուան համար:

Թեմական Խորհուրդը վերանորոգեց սրահը եւ զայն մատչելի դարձուց համայնքի շրջանի բոլոր զաւակներուն, զայն վարձելու համար յարմար եւ մատչելի գիններով, այնտեղ կազմակերպելու համար համայնքային միջոցառումներ: Յատկապէս մատչելի դարձուց այդ շրջանի զանազան համայնքային կազմակերպութիւններուն, որ ունենան տրամաբանօրէն ընդարձակ վայր մը իրենց միջոցառումներուն, ժողովներուն եւ ընտանեկան ձեռնարկներուն համար:

Փարոս - Հայկական կազմակերպութիւններու համար յատուկ դիրութիւններ կը տրուի՞ն

Պրն Գրգեաշարեան – Երկու կազմակերպութիւններ արդէն կանոնաւորապէս կը գործածեն կեդրոնը, Հայ Երէցներու Միութիւնը եւ Հայ Համայնքի Բարեկեցութեան Կեդրոնը: Թեմական Խորհուրդը սրահը մատչելի պիտի դարձնէ Հայկական Կազմակերպութեանց վարձակալութեան գեղջեալ արժէքով, ծախսը փակելու չափով: Թեմական Խորհուրդը



կը քաջալերէ բոլոր հայկական կազմակերպութիւնները որ այս կեդրոնը նկատի ունենան որպէս իրենցը, եւ պատրաստ է զայն հետեւողականօրէն մատչելի դարձնել հերթական ձեռնարկներու համար ինչպէս երգչախումբերու փորձեր, սկաուտական հաւաքներ, վիճաբանական ասուլիսներ, դասախօսութիւններ, ընթրիքներ, ընկերային հաւաքներ եւ այլն: Կեդրոնը ուղիղ կը նայի Արարատ մարմնամարզի դաշտին, ինչ որ զայն կը դարձնէ իտեալական վայր մարմնամարզի կազմակերպութիւններուն գործածելու դաշտը մարզանքներու համար, իսկ ծնողներ կրնան Արարատ Կեդրոնը գործածել որպէս հաւաքավայր:

Փարոս - Ձեր ակնկալիքները ի՞նչ են ընդհանրապէս եւ ի՞նչ են ձեր ապագայ ծրագիրները

Պրն Գրգէաշարեան – Թեմական Խորհուրդին նպատակն է կեդրոնը դարձնել հաւաքավայր, ուր ռեւէ հայ համայնքի անդամ կրնայ բաժակ մը սուրճի շուրջ իր բարեկամներուն հանդիպիլ: Նաեւ, որ ընտանիքներ ընտանեկան հաւաքներ կազմակերպեն յատուկ առիթներով ինչպէս տարեդարձներ, ամեակներու նշում եւլն: Իսկ հայկական կազմակերպութիւններ կազմակերպեն յատուկ միջոցառումներ յատուկ տօներու առիթով ինչպէս Միջինք, Համբարձում, Վարդավառ եւլն:

Փարոս - Պատգամ ունի՞ք մեր ընթերցողներուն

Պրն Գրգէաշարեան – Գործածեցէք կեդրոնը որպէսզի ձեր զուակները հայկական մթնոլորտի մէջ հաւաքուելու վայր մը ունենան:

Հարցազրոյցը վարեց Նշան Պասմաճեան

Բարի Ապաքինման Մաղթանք

Բարձրաշնորհ Տէր Հայկազուն Արքեպիսկոպոս Նաճարեանը, Թեմական Խորհուրդի անդամները, Կալուածոց Յանձնախումբը, Ծխական Խորհուրդները եւ Փարոսի Խմբագրական Կազմը բարի ապաքինում կը մաղթեն Թեմական Խորհուրդի ատենապետ Պրն Սարգիս Տէր Պետրոսեանին, ծունկի յաջող վիրահատութեան առիթով:
Մեր բոլորին աղօթքն է որ Պարոն Տէր Պետրոսեանի ներկայութիւնը ի մօտոյ վերստին կարենանք վայելել Առաջնորդարանի թէ Սուրբ Յարութիւն Մայր Եկեղեցոյ մէջ:
Բարի եւ շուտափոյթ ապաքինում:

Get Well Wishes

With the Primate, His Eminence Archbishop Haigazoun Najarian, fellow Diocesan Councillors, Properties Committee, Parish Councils and the Paros Editorial team, our sincere well wishes are extended to our Chairman, Mrs Sarkis Der Bedrossian who is on the road to good recovery following his knee surgery.

We look forward to seeing his constant presence once again within the Diocesan Centre and in the mother Church of Holy Resurrection.

Our prayers continue for his full recuperation.

Լուրեր Ծուխերէն

Ուէնթուրթովիլ - ՄԻՏՆԻ Սուրբ Երրորդութիւն Եկեղեցի

Կիր., 2 Յունիս – Արժանապատիւ Տէր Միւռն Քահանայ Աւետիսեան պատարագեց եւ քարոզեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տօնին առիթով:

Կիր., 9 Յունիս – Արժ Տէր Աւետիս Քահանայ Համբարձումեան պատարագեց Տէր Միւռնի բացակայութեան: Հաւատացեալները մեծ հետաքրքրութեամբ ունկնդրեցին Տէր Հօր քարոզը Յիսուսի կեանքին վերաբերեալ, ըստ Մատթէոսի Աւետարանին 12:1-8:

Կիր., 16 Յունիս – Բարձրաշնորհ Տէր Հայկազուն Արքեպիսկոպոս Նաճարեան պատարագեց եւ ինաստալից քարոզ տուաւ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչի, յատկապէս Սուրբին վախճանման մասին 325-326 թուականներուն: 325 թուականին, Լուսաւորիչի գաւակը Արիստակէս Եպիսկոպոս մասնակցեցաւ Նիկիոյ Տիեզերական ժողովին, որուն 1700 ամեակը պիտի տօնուի աշխարհի բոլոր Քրիստոնէաներուն կողմէ յառաջիկայ տարի: 318 Եպիսկոպոսներու ստորագրութեանց մէջ է նաեւ Արիստակէսի ստորագրութիւնը որում Նիկիոյ Հանգանակի փաստաթուղթին տակ, այսինքն «Հաւատամք»ին, զոր կ'արտասանեն բոլոր հաւատացեալները Սուրբ Պատարագի ընթացքին: Սրբազան հայրը մանրամասնութեամբ խօսեցաւ Լուսաւորիչի մասին, որուն նկարները եւ մասունքները կը գտնուին շատ մը եկեղեցիներու եւ վանքերու մէջ: Յիշենք Լուսաւորիչը որպէս առաջին Հայ սուրբը եւ



Եպիսկոպոսը եւ ինդրենք իր միջամտութիւնը մեզի պարգեւելու հոգեկան զօրութիւն, որը անհրաժեշտ է մեր այս օրերուն:

Կիր., 23 Յունիս – Սուրբ եւ Անմահ Պատարագ մատուցեց Արժանապատիւ Տէր Պարթեւ Աւագ Քահանայ Գարագաշեանը եւ քարոզեց բնաբան ընտրելով մոլախտոններու առակը, ուր Քրիստոս կը բացատրէ թէ Դրախտի թագաւորութիւնը կը նմանի դաշտին, ուր մարդ մը ցորենի լաւ սերմեր կը ցանէ իսկ թըշնամին մոլախտոս կը ցանէ անոնց կողքին:



Թող մոլախոտն ու ցորենը միասին բուսնին մինչև բերքահաւաք, կ'ըսէ Քրիստոս: Գործաւորները նախ պիտի արմատախիլ ընեն մոլախոտերը եւ այրեն զանոնք եւ յետոյ հաւաքեն ցորենը եւ դնեն մարագին մէջ:

Կիր., 30 Յունիս – Տէր Պարթեւ պատարագեց եւ քարոզեց 5 նկանակի եւ 2 ձուկի առակին մասին:

Մարի Բլէր Թորոսեան

Բարի Ապաքինման Մաղթանք

Բարձրաշնորհ Տէր Հայկազուն Արքեպիսկոպոս Նաճարեանը, Թեմական Խորհուրդը, Կալուածոց Յանձնախումբը, Ծխական Խորհուրդները եւ Փարոսի Խմբագրական Կազմը բարի ապաքինում կը մաղթեն Թեմական Խորհուրդի նախկին ատենապետ Պրն Վահան Պաթմանեանին, վիրահատութեան առթի: Պաթմանեան ընտանիքը ընդհանրապէս եւ Պրն Վահան Պաթմանեան մասնաւորապէս տարիներ շարունակ զօրաւիզ հանդիսացած են Հայաստանեայց Առաքելական մեր եկեղեցիներուն եւ Առաջնորդարանին: Կ'աղօթենք առ Բարձրեալն որ Պարոն Վահան Պաթմանեանին շնորհէ շուտափոյթ ապաքինում, առողջութիւն եւ վերադարձ բնականոն կեանքի:

Բարի Ապաքինման Մաղթանք

Բարձրաշնորհ Տէր Հայկազուն Արքեպիսկոպոս Նաճարեանը, Թեմական Խորհուրդը, Առաջնորդարանի Տիկնանց Յանձնախումբը եւ Փարոսի Խմբագրական Կազմը բարի ապաքինում կը մաղթեն Տիկնանց Յանձնախումբի ժրաջան անդամուհի Տիկին Մարալ Խարաճեան-Քոփսիասին, Յունիսիսն ունեցած իր յաջող վիրահատութեան առիթով: Շուտափոյթ ապաքինում կը մաղթենք Տիկին Մարալին եւ կ'աղօթենք որ ամենակարճ ժամանակամիջոցին ան կարենայ վերադառնալ Առաջնորդարանին ի սպաս իր աշխատանքներուն:

Յաւակցագիր

Բարձրաշնորհ Տէր Հայկազուն Արքեպիսկոպոս Նաճարեանը, Թեմական Խորհուրդը եւ Փարոսի Խմբագրական Կազմը, եկեղեցական ընտանիքին հետ միասին, իրենց խոր ցաւակցութիւնը կը յայտնեն Սուրբ Յարութիւն Եկեղեցոյ Ծխական Խորհուրդի բազմամեայ անդամ Տիար Վազգէն Էմիրզայանին եւ ընտանիքին, իր եղբօր Գեորգ Ամիրզայեանի մահուան տխուր առիթով, որ պատահեցաւ 16 Յունիսին, 58 տարիքին, յետ հիւանդութեան:

Յուղարկաւորութեան տխուր արարողութիւնը տեղի ունեցաւ Հինգշաբթի 27 Յունիսին, հանդիսապետութեամբ Առաջնորդ Սրբազան Բարձրաշնորհ Տէր Հայկազուն Արքեպիսկոպոս Նաճարեանի, որմէ ետք հանգուցեալին մարմինը ամփոփուեցաւ Բուքրուտուտի գերեզմանատան հայկական բաժինին մէջ:

Կ'աղօթենք առ Աստուած, որ Ինք սփոփէ երկու զաւակներու հայր Գեորգի ընտանիքի անդամներուն ցաւը եւ անոնց շնորհէ Սուրբ Հոգոյ մխիթարութիւնը:

Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի:



ԼՈՒՐԵՐ

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԷՆ

ՆՇՈՒԵՑԱԻ ԿԱԹՈՂԻԿԷ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՏՕՆԸ

Յունիս 2-ին Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին նշեց Կաթողիկե Սուրբ Էջմիածնի տօնը: Բերկրառատ օրուան առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանութիւնը, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագոյն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի գլխաւորութեամբ, Պատարագի սրբազան արարողութեան մասնակցեցաւ Սուրբ Գայանէ վանքին մէջ: Պատարագիչն էր Մայր Աթոռի Քրիստոնէական դաստիարակութեան կեդրոնի տնօրէն Հոգեշնորհ Տ. Զաքարիա ծայրագոյն վարդապետ Բաղումեանը: Հայր Սուրբը անդրադարձաւ տօնի խորհուրդին, եւ Սուրբ Էջմիածնի նշանակութեան և մեր ազգի կեանքին մէջ ունեցած դերակատարութեան: «Սուրբ Էջմիածինը խտացումն ու պահպանան է ազգային-քրիստոնէական մեր ինքնութեան, որ հաստատուեց Միածնի իջմամբ, հայացաւ Սուրբ Թարգմանիչ վարդապետների սիրանքով, դարերի ընթացքում բիրտեղացաւ հայերիս հոգում և սրտում՝ դառնալով անմահութեան գրաւականը, մարդ-Աստուած հանդիպման վայրը, ուր ժամանակն անժամանակ է, իսկ սրտաբուխ աղօթքը՝ լսելի: Հաւատարիմ լինել Սուրբ Էջմիածնի խորհրդին նշանակում է անմնացորդ սիրել մեր Հայրենիքը, աստուածահաստատ Հայոց Եկեղեցին և հաւատալ անմահութեանը՝ դառնալով յոյսի, յոյսի և սիրոյ քարոզիչներն այս կեանքում», - նշեց Հայր Զաքարիան: Պատարագի արարտին, Վեհափառի հանդիսապետութեամբ, կատարուեցաւ Հայրապետական մաղթանք: Ներկայ հաւատացեալները և եկեղեցականները աղօթք բարձրացուցին Մայր Աթոռի յաւերժ պայծառութեան, անսասանութեան և յարատեւութեան համար:



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՊՈՒԼԿԱՐԱՀԱՅ ՈՒՒՏԱԻՈՐՆԵՐ

Յունիս 6-ին Վեհափառը ընդունեց պուլկարահայ ուխտաւորները գլխաւորութեամբ Պուլկարիոյ Պապարճիկ քաղաքի Սուրբ Ստեփանոս հայկական եկեղեցւոյ վարչութեան ատենապետ Նշան Պղտիկեանի: Հանդիպման ընթացքին Հայոց Հովուապետը յորդորեց համախումբ ըլլալ Հայ Եկեղեցւոյ շուրջ, ապրիլ ու գործել քրիստոնէական և ազգային արժէքներով:



**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ
ԸՆԴՈՒՆԵՑ
ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ
ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՂԵԿԱՎԱՐ ԿԱԶՄԸ**

Յունիս 10-ին Վեհափառը ընդունեց Ամերիկայի Հայկական Համագումարի (ԱՀՀ) նախագահ Քարոլին Մուկարը, համանախագահներ Վան Գրիգորեանը, Էնթոնի Պարսամեանը և գործադիր տնօրեն Պրայըն Արդունը: Անդրադարձ կատարուեցաւ երկրի առջև ծառայած անվտանգային հիմնախնդիրներուն, Հայաստանի ներքաղաքական և քաղաքական հարաբերակցական իրավիճակին: Կարևորուեցաւ աշխարհասփիւռ հայութեան կեանքին մէջ Եկեղեցոյ առաքելութիւնը՝ ուղղուած ժողովուրդի միասնութեան ու համերաշխութեան ամրապնդման, ինչպէս նաև համընդհանուր ջանքերու մէկտեղումը՝ ի նպաստ առկայ մարտահրաւերներու յաղթահարման և հայրենիքի զօրացման:

**ՄԱՅՐ ԱԹՈՌ՝ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՇՆԻ ՄԷՋ ՄԵԿՆԱՐԿԵՑ
ԳԵՐԱԳՈՅՆ ՀՈԳԵՈՐ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԺՈՂՈՎԸ**

Յունիս 11-ին, Վեհափառին նախագահութեամբ սկսան Գերագոյն հոգևոր խորհուրդի աշխատանքները: Վեհափառ Հայրապետը իր գնահատանքն ու օրհնութիւնը բերելով Գերագոյն հոգևոր խորհուրդի հոգևորական և աշխարհական անդամներուն, հայցեց Սուրբ Հոգիի շնորհներն ու առաջնորդութիւնը: Ժողովի ընթացքին քննարկուեցան Հայրենիքի առջև ծառայած արտաքին սպառնալիքները և ներքաղաքական զարգացումները, Մայր Տաճարի վերածման ու Միւռնօրհնութեան կազմակերպումը, Եկեղեցական հայեցակարգային հիմնախնդիրներ, նաև եկեղեցավարչական, թեմական, կրթադաստիարակչական տարաբնոյթ հարցեր: Խորհուրդը դուրս եկաւ հետեւեալ յայտարարութեամբ.



Մենք՝ Գերագոյն հոգևոր խորհրդի անդամներս, համախմբուելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում օրհնութեամբ և բարձր նախագահութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, օրակարգային հարցերի քննարկումների ընթացքում խոր մտահոգութեամբ անդրադարձ կատարեցինք մեր հայրենիքի առջև ծառայած ներքաղաքական խնդիրներին և արտաքին անվտանգային մարտահրաւերներին: Յետպատերազմեան շրջանում ՀՀ իշխանութիւնների վարած քաղաքականութիւնը և յատկապէս վերջերս սահմանազատման և սահմանազոման գործընթացի անուան ներքոյ կատարած տարածքային միակողմանի զիջումները հիմնաւոր նոր անհանգստութիւնների ու տագնապների պատճառ են դարձել ինչպէս հայրենիքում, այնպէս և սփիւռքում, տեղիք տուել անվտանգութեան ձևաւորման՝ հանգեցնելով նաև Հայաստանի վարչապետի հրաժարականի պահանջին: Հայրենիքի առջև ծառայած անվտանգային մարտահրաւերների շուրջ ժողովրդի բարձրաձայնած մտավախութիւնները,



ազգային կառույցների և մասնագիտական հանրոյթի կոչերն ու յորդորները անտեսում են ՀՀ իշխանությունների կողմից և կամ հակադարձում հաւանական պատերազմի սպառնալիքներով: Իսկ հանրային ստուար շրջանակներում իշխանությունների նկատմամբ ձևաւորուած արդարացի դժգոհույթիւնները, որ դրսևորում են բողոքի և անհնազանդութեան խաղաղ գործողութիւնների միջոցով, փորձ է արւում լրեցնել ցուցարարների նկատմամբ արժանապատուութեան նսենացմանն ուղղուած գործողութիւններով և բռնի անհամաչափ ուժի

գործադրութեամբ: Իստիւ դատապարտում ենք Յունիսի 12-ին Երևանում խաղաղ հաւաքի մասնակիցների նկատմամբ ձեռնարկուած ակնյայտ ապօրինի քայլերը և գործադրուած միջոցները, ինչի հետևանքով ցուցարարների և ոստիկանների շրջանում կան բազմաթիւ տուժածներ, այդ թւում՝ մարմնական ծանր վնասուածքներով: Մեր կոչն է ՀՀ իշխանութիւններին զերծ մնալ բռնութիւնից, ատելութիւն և թշնամանք սերմանելու մերժելի դրսևորումներից: Մեր կոչն է նաև իրենց բողոքի ձայնն արտայայտող հայրենակիցներին գործել ամենայն զգօնութեամբ և օրինայարգութեամբ: Ներկայ վտանգաշատ կացութիւնը կարօտ է արժանապատիւ հանգուցալուծումների, առկայ ճգնաժամը՝ հանդարտութեան և զգաստութեան մէջ քաղաքական երկխօսութեան: Դատապարտելի է նաև, որ իշխանութեան բարձրաստիճան ներկայացուցիչներն ու նրանց աջակից անձերը հետևողականօրէն լծուել են հանրահաւաքների կազմակերպման պատասխանատուութիւնը Եկեղեցուն վերագրելու անհիմն և ստահող լուրերի տարածմանը՝ փորձելով արդարացնել հակակեղեցական իրենց կեցուածքը, որի ամօթալի դրսևորումներից էր Մայիսի 28-ին Սարդարապատի յուշահամալիրում Ամենայն Հայոց Կաթողիկոսի և եկեղեցականների դէմ հրահրուած սադրանքը: Բոլոր ժամանակներում, հայրենի իշխանութիւնների կոչումն ու առաքելութիւնն է ներհասարակական համերաշխութեան պահպանումը և համազգային միաբանութեան ձևաւորումը, ինչը կենսականօրէն անհրաժեշտ է յատկապէս մերօրեայ պայմաններում: Բշխանութիւնն ինքնին որևէ մէկի կամ որևէ քաղաքական ուժի համար չպէտք է լինի սոսկ ձգտում, այլ առաջին հերթին՝ միջոց ժողովրդին և հայրենիքին խոհեմ, շրջահայեաց ու անձնուրաց ծառայութեան և խաղաղ ու ապահով կեանքի կերտման: Հաւատում ենք, որ հայրենիքի հանդէպ սերը և պատասխանատուութիւնը պիտի հարթեն շաւիղները՝ համազգային մեր ներուժն ու բոլոր կարողութիւնները ի սպաս դնելու Հայաստանի Հանրապետութեան պաշտպանութեանն ու զօրացմանը և իրականութեան կոչելու ապագայի համընդհանուր մեր տեսլականը: Թող Ամենողորմ Տէրը համերաշխ ու միասնական պահի ու պահպանի աշխարհասփիւռ մեր ժողովրդին և հայրենի մեր երկիրը խաղաղ ու անվտանգ ընթացքով առաջնորդի դէպի լուսաւոր նոր հանգրուաններ:

Յունիսի 13-ին աւարտեցաւ Գերագոյն Հոգևոր Խորհուրդի ընդլայնուած ժողովը: Ժողովին ատենապետութիւնը վարեցին Բարձրաշնորհ Տէր Խաժակ արքեպիսկոպոս Պարսամեանը և Տէր Յովնան արքեպիսկոպոս Տէրտերեանը:



Հայրենիքի առջև ծառայած արտաքին սպառնալիքներու և ներքաղաքական զարգացումներու մասին զեկուցեցին Բարձրաշնորհ Տէր Նաթան Արքեպիսկոպոս Յովհաննիսեանը և Տէր Արշակ արքեպիսկոպոս Խաչատրեանը: Մայր Տաճարի հիմնանորոգութեան ընթացքին և վերածման, ինչպէս նաև Միւռնօրհնութեան արարողութիւններու կազմակերպական աշխատանքներուն մասին զեկուցեցին Արշակ եւ Սուշէղ Սրբազանները: Գոհունակութեամբ արձանագրուեցաւ, որ Մայր Տաճարի հիմնանորոգութիւնը աւարտական հանգրուանին է: Տեղեկացուեցաւ Սեպտեմբերի 27-29-ին նախատեսուող Մայր Տաճարի վերածման, Սրբալոյս Միւռնի օրհնութեան արարողութիւններու եւ յարակից միջոցառումներու նախապատրաստման փուլին մէջ իրականացուած շինարարական, հրատարակչական, ծիսաարարողակարգային աշխատանքներու ընթացքի մասին: Արարողութիւններուն հրաւիրուած են մասնակցելու միջ-եկեղեցական պատուիրակութիւններ, մեծանուն, վաստակաշատ ազգայիններ: Ժողովին քննարկուեցան եկեղեցավարչական, թեմերու գործունէութեան, կանոնական, իրաւական, կրթադաստիարակչական ոլորտներուն առնչուող հարցեր: Որոշուեցաւ 2025 թուականին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մէջ գումարել Եկեղեցական-ներկայացուցչական ժողով (ԵՆԺ):

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԵՐԵՒԱՆԻ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ, 16 ՅՈՒՆԻՄԻՆ



Ձեռամբ ԱՄՆ Հայոց Արևելեան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Մեսրոպ եպիսկոպոս Պարսամեանի, քահանայական ձեռնադրութեան և օծման արժանացան Մայր Աթոռի տարբեր կառոյցներու մէջ սպասարկող եօթ սարկաւազներ: Գէորգ սրկ Ստեփանեանը վերակոչուեցաւ Տէր Կարապետ քահանայ, Էդգար սրկ Օհանեանը՝ Տէր Դաւիթ քահանայ, Վահէ սրկ Մկրտչեանը՝ Տէր Բարսեղ քահանայ, Սամուէլ սրկ Պապիկեանը՝ Տէր Կորիւն քահանայ, Սարգիս սրկ Փահլևանեանը՝ Տէր Արսէն քահանայ, Յարութիւն սրկ Մելքոնեանը՝ Տէր Շահան քահանայ և Գառնիկ սրկ Սարգսբեանը՝ Տէր Սարգիս քահանայ:

Սրբազան Հայրը, իր քարոզին մէջ պատգամեց նորընծաներուն, որ իրենք քահանայական ծառայութեան մէջ միայնակ չեն, այլ Սուրբ Հոգին իր զօրութեամբ կ'առաջնորդէ զիրենք: *«Զօրութիւնը, սիրելիներ, ստանում ենք մէկ նպատակի համար, որպէսզի լինէք մեր տիրոջ Յիսուս Քրիստոսի վկաները: Դուք Սուրբ Հոգու շնորհները, զօրութիւնը ձեր ճակատներին, սրտերին ու ձեռքերին կրող քահանաներ էք և Քրիստոսին պիտի վկայէք ձեր ընտանիքներում, ձեր քաղաքում, Հայաստան աշխարհում և աշխարհի տարբեր ծագերում»*, - ըսաւ Մեսրոպ Սրբազանը: Ապա Մայր Աթոռի միաբաններն ու ներկայ հոգևորականաց դասը բարձրացան Սուրբ Խորան, շնորհաւորեցին քահանաները և համբուրեցին վերջիններուն միւռնաբոյր ճակատներն ու ձեռքերը՝ ստանալով անդրանիկ «Ողջոյն»-ը: Նոյն օրը, երեկոյեան, Սուրբ Գայանէ վանքին մէջ կատարուեցաւ վեղարի տուչութեան արարողութիւն: Տէր Դաւիթ և Տէր Շահան քահանաները վեղար ստացան ու մաս կը կազմեն Սուրբ Էջմիածնի միաբանութեան: Նորած քահանաները Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մէջ կ'անցնեն քառասնօրեայ պատրաստութեան և աղօթքի շրջան, որմէ ետք ծառայութեան կը կոչուին Հայ Եկեղեցոյ տարբեր կառոյցներու և թեմերու մէջ: Աւելի ուշ, եօթ նորած հոգևորականները հանդիպեցան Վեհափառ հօր հետ: Վերջինս իր օրհնութիւնը բերաւ եկեղեցականներուն և յորդորեց չընկճուիլ դժուարութիւններու և փորձութիւններու առջև, անմնացորդ նուիրուիլ իրենց ծառայութեան, կրթել և դաստիարակել հայրողիները, անոնց մէջ սերմանել հաւատքն առ Աստուած, սերն առ հայրենին և Սուրբ Եկեղեցին: Նորընծաները խոստացան արդարացնել Հայոց Հայրապետին յոյսերը և անսակարկ ծառայել Երկնաւոր Տիրոջն ու հայ ժողովուրդին:

ՎԵՀԱՓԱՌԸ ԸՆԴՈՒՆԵՑ «ՍՈՍ ԱՐՆԵԼՔԻ ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐ» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ



Յունիս 17-ին Վեհափառը ընդունեց սոյն կազմակերպութեան գլխաւոր տնօրէն Պենճամին Պլանշաղի գլխաւորած պատուիրակութիւնը: Վեհափառը իր գնահատանքը յայտնեց կազմակերպութեան Հայաստանին և հայ ժողովուրդին ցուցաբերուող աջակցութեան համար, ինչպէս նաեւ Մայր Աթոռի հետ գործակցութեան համար, որուն շնորհիւ կ'արդիականանայ Մայր Աթոռի տպարանը: Պրն Պլանշաղ տեղեկութիւն փոխանցեց «Սոս Արնելքի քրիստոնէաներ» կազմակերպութեան գործունէութեան մասին՝ ի մասնաւորի անդրադառնալով Հայաստանի տարբեր մարզերուն մէջ իրականացուող կրթական, գիւղատնտեսական, առողջապահական, ինչպէս նաև քրիստոնէական և մշակութային յուշարձաններու վերականգնման վերաբերող ծրագրերուն:

կազմակերպութեան գործունէութեան մասին՝ ի մասնաւորի անդրադառնալով Հայաստանի տարբեր մարզերուն մէջ իրականացուող կրթական, գիւղատնտեսական, առողջապահական, ինչպէս նաև քրիստոնէական և մշակութային յուշարձաններու վերականգնման վերաբերող ծրագրերուն:



տեղեկութիւն փոխանցեց Իսթանպուլի Պէյօղլու շրջանի հայկական համայնքի գործունէութեան մասին: Վեհափառը գոհունակութեամբ անդրադարձաւ պոլսահայ համայնքի ամուր հաւատքին, ծառայանուիրումին, եկեղեցասիրութեան և Մայր Աթոռին նկատմամբ ունեցած անվերապահ սիրոյն: Ան յորդորեց սոյն նախանձախնդրութեամբ զօրացնել իրենց հաւատքն առ Աստուած, սերը առ մայր Եկեղեցին և պահպանել ազգային ինքնութեան գիտակցութիւնը:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԸՆԴՈՒՆԵՑ Կ. ՊՈԼՍՈՑ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ՈՒՆՏԱԻՈՐՆԵՐԸ

Յունիս 19-ին Վեհափառը ընդունեց ուխտաւորաբար Հայաստան ժամանած Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքութեան Պէյօղլու շրջանի հայկական համայնքի վարչական և թաղային խորհուրդի անդամները, ուղեկցութեամբ շրջանի հայկական եկեղեցիներու հոգևոր տեսուչ Հոգեշնորհ Տ. Յարութիւն վարդապետ Տամատեանի և թաղային խորհուրդի ատենապետ տիար Աքսել Թոփալեանի: Հայր Սուրբը



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԱՄՆ ՀԱՅՈՑ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄԻ ՈՒՆՏԱԻՈՐՆԵՐԸ

Յունիս 25-ին Վեհափառը ընդունեց ԱՄՆ Հայոց Արևմտեան թեմի Փասատինայի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ համայնքի ուխտաւորները, առաջնորդութեամբ հոգևոր հովիւ Արժ. Տ. Սարգիս աւագ քահանայ Պետոյեանի: Վեհափառ Հայրապետը կարևորեց աշխարհասփյուռ հայ ուխտաւորներու իրենց ուխտը Սուրբ Էջմիածնի մէջ նորոգելը, ինչպէս

նան հաղորդ դառնալու հայրենիքի առաջ դրուած մարտահրաւերներուն և իրենց զօրակցութիւնը բերելու հայ ժողովուրդին: Վեհափառը պատգամեց զօրանալ առ Աստուած հաւատքով, կրթել ու դաս-տիարակել իրենց զաւակները աստուածպաշտութեամբ, եկեղեցասիրութեամբ ու հայրենասիրութեամբ:



**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԻՐ
ՕՐՀՆՈՒԹԻՒՆԸ ԲԱՇԽԵՑ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՅՆԵՐՈՒՆ ՄԱՄՆԱԿԻՑ
ԵԿԵՂԵՑԱԿԱՆՆԵՐՈՒՆ**

Յունիս 26-ին Վեհափառը ընդունեց հերթական երեքշաբթեայ վերապատրաստման դասընթացներուն մասնակից քահանաները: «Գարեգին Ա» կրթական կեդրոնի տնօրէն Գերաշնորհ Տ. Վահան եպիսկոպոս Յովհաննիսեան Հայոց Հովուապետին ներկայացուց Հայաստանի և

Սփիւռքի տարբեր թեմերէն Մայր Աթոռ հաւաքուած հոգևորականները, անդրադարձաւ վերապատրաստման դասընթացներու արդիւնաւէտութեան: Այնուհետև հոգևոր հայրերը ողջունեց և իր հայրական օրհնութիւնը բերաւ Նորին Սրբութիւնը: Ան մասնաւորաբար մտահոգութիւն արտայայտեց երկրին առջև ծառայած անվտանգային մարտահրաւերներուն, արցախահայերու ընկերային խնդիրներուն և ազգային կեանքի մէջ անհանդուրժողութեան ու թշնամանքի վտանգաւոր դրսևորումներուն առնչութեամբ: Հայոց Հայրապետը յորդորեց քահանայ հայրերը իրենց պատասխանատուութեան տակ գտնուող համայնքներու ներգրամամբ լծուիլ առկայ հիմնախնդիրներու յաղթահարման, հայրենիքի զօրացման և շէնացման գործին: Նորին Սրբութիւնը նաև պատասխանեց քահանաներու հարցումներուն:

**ՎԵՀԱՓԱՌԸ ԸՆԴՈՒՆԵՑ
ԱՄՆ ՀԱՅՈՑ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ
ՈՒԽՏԱԻՈՐՆԵՐԸ**

Յունիս 27-ին Վեհափառը ընդունեց ԱՄՆ Հայոց Արևելեան թեմի Մասաչուսեթս նահանգի Ուստրի Սուրբ Փրկիչ եկեղեցւոյ համայնքի ուխտաւորները, առաջնորդութեամբ հոգևոր հովիւ Արժ. Տ. Թադէոս քահանայ Բարսեղեանի: Վերջինս ընդգծեց, որ ուխտաւորները եկած էին իրենց ուխտը վերանորոգելու և Հայրենիքի հետ կապը զօրացնելու համար: Հայոց Հովուապետը, իր հայրական սէրը փոխանցեց ուխտաւորներուն եւ ընդգծեց, որ մեր ժողովուրդը հաւատքով ու զօրեղ կամքով, համազգային միասնականութեամբ կրնայ յաջողութեամբ դիմագրաւել մերօրեայ բոլոր դժուարութիւններն ու փորձութիւնները, ամրապնդել հիմերը հայոց անկախ պետականութեան, եւ հետամուտ ըլլալ տեղահանուած արցախահայութեան իրաւունքներու պաշտպանութեան:



ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԻ ԳԷՈՐԳԵԱՆ ՀՈԳԵԻՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ
2023-2024 ԹԹ. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒԱՆ ՓԱԿՈՒՄԸ



Յունիս 28-ին Վեհափառ հոր նախագահությամբ Մայր Աթոռի մէջ տեղի ունեցաւ Գեորգեան ճեմարանի ուսումնական տարւան փակման հանդիսութիւնը: Ներկաները ողջունեց Գեորգեան ճեմարանի և Սևանի Վազգէնեան հոգևոր դպրանոցի տեսուչ Հոգեշնորհ Տ. Շահէ ծայրագոյն վարդապետ Անանեանը: Հայր Սուրբը անդրադարձաւ ճեմարանի ունեցած նշանակութեան, արձանագրեց, որ 2023-2024 և գալիք 2024-2025 ուսումնական տարիներուն պիտի նշուի Գեորգեան հոգևոր ճեմարանի հիմնադրութեան մեկուկէտարեայ յոբելեանը: «Հայոց Սրբութիւն Սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում հիմնադրուած ու այդ կենսաւետ աւիշից սնուող այս հաստատութեան պատմութիւնն այլևս չափուելու է դարերով...: Գեորգեան ճեմարանի հիմնադիր Գեորգ Դ Մեծագործից մինչև ազգիս Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Բ Շինարար հայրապետների խնամող շնչով ու հեռահայեաց տեսիլքով է կերտուել և կերտուում դարաւոր այս աւանդոյթը, նրանց հայրական շունչն է, որ հաստատուն է պահում մեր բոլորիս սիրելի Գեորգեան ճեմարանը» ըսաւ Հայր Շահէ: Ճեմարանի երգչախումբի կատարումներէն ետք դասախօսներու անունով խօսք առաւ Պրն Արսէն Յարութիւնեան, իսկ ուսանողութեան անունով՝ 6-րդ լսարանի սան՝ Բարեշնորհ Տոնտ սարկաւազ Ղազարեանը: Վեհափառը պարզնէր յանձնեց ուսման մէջ բարձր առաջադիմութիւն արձանագրած ուսանողներուն: Նորին Սրբութիւնը անդրադառնալով ճեմարանի 150-րդ տարեդարձին ըսաւ. «Մեծ յոբելեանը մէկ անգամ ևս մեզ յիշեցնում է հոգևոր-կրթական հաստատութիւնների կոչման ու առաքելութեան և դարաւոր աւանդների պահպանութեան կարևորութիւնը: Հիմնադիր Գեորգ Դ Հայրապետը կրթութեան մեծ ջատագովն ու իրախուստդն էր, առաւել ևս՝ հոգևոր կրթութեան,

որը պայմանն է բարոյական արժէքներով առողջ հասարակութեան կազմաւորման, մարդկային կեանքի աստուածօրհնեալ ընթացքի»: Հայոց Հովուապետը ընդգծեց նաև հոգևորականներու առաքելութեան կարևորութիւնը ներկայ ժամանակներուն մէջ. «... Անտարակոյս, անձնփրկ, բոլորանուէր ծառայութեամբ ու սկզբունքային կեցուածքով պիտի լուծումներ ստանան մեր ժողովրդի առջև ծառայած ներկայ բարդ ժամանակների խնդիրները, վերացունեն մոլորեցնող գործողութիւններն ու երևոյթները և յաղթահարունեն աստուածամերժ ու կորստաբեր ընթացքները հայրենական մեր կեանքում»: Նորին Սրբութիւնը նաև մաղթեց, որ Բարձրեալն առաւել պայծառացնէ ճեմարանականներու միտքն ու հոգին, ամուր պահէ հաւատքը և աննահանջ ժողովուրդին ու հայրենիքին ծառայելու սրբազան կոչումը:

ԳԻՐՔԻ ՇՆՈՐՀԱՀԱՆԴԷՍ

ՀՈՎԱՆԱԲՈՐՈՒԹԵԱՄԲ

Բարձրաշնորհ Տէր Հայկազուն
Արքեպիսկոպոս Նսանդեանի
Առաջնորդ Աւստրալիոյ եւ Նոր
Չելանտայի Հայոց Թեմին

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԲ

Աւստրալիոյ եւ Նոր Չելանտայի
Առաջնորդարանին

ԳԻՐՔԸ ԿԸ ՆԵՐԿԱՅԱՅՆԷ

Նշան Սարկաւազ Պատմաճեման
Դիւանասպետ Առաջնորդարանի

Տեղի կ'ունենայ

ՈՒՐՔԱԹ 6 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2024-Ի
Էրեկայեան Ժամը 7-ին

Սուրբ Յարութիւն Մայր

Եկեղեցւոյ Էակարեան Սրահին Մէջ
- ՉԱՅՈՒՈՒՆ

Աւարտին Գիրքերու

Ստորագրութիւն Հեղինակին Կողմէ
եւ Հիւրասիրութիւն


Հրատարակուած է

Աւստրալահայ Համայնքը
Սուսքը Ազատ



**«ՀԱՅԿԱԿԱՆ
ԱԶԳԱԳՐԱԿԱՆ
ՊԱՏԿԵՐՆԵՐ –
ՏԵՍԻԼՔ,
ԿԱՄՔ ԵՒ ՅՈՅՍ»**

Հեղինակ՝
Դոկտոր
Հրայր Ծէպէճեան



DIOCESAN NEWS



Saturday 1 June – Accompanied by Reverend Father Avetis Hambarzumyan, His Eminence Archbishop Haigazoun Najarian attended Masha Mnjoyan's concert at Sydney's Orpheum Theatre in Cremorne tributing Whitney Houston songs. Masha, who has become an increasingly popular artist in the last five years amongst Australian Armenians in particular and similarly in Australia thanks to her vocal talent, presented a high-quality concert. The audience proudly appreciated Masha's talent, which she was able to use to interpret Whitney Houston's original songs with excellent precision. Paros editorial office congratulates Masha for all her achievements, which she has reached with the support of another Armenian lady, Anna Hovhannisyan.

Sunday 2 June – The Divine Liturgy was celebrated in the Holy Resurrection Church, with the celebrant being Reverend Father Avetis Hambarzumyan. It was the Feast of Holy Etchmiadzin. A Patriarchal Blessing was held under the solemnity of His Eminence. Deacon Leon Esibov, who is the Chairman of the Parish Council of the Holy Resurrection Church in Seattle, USA, arrived at the Church directly from the airport. The Deacon served at the altar throughout the Divine Liturgy and His Eminence introduced him to the congregation.



Tuesday 4 June – In the morning, accompanied by Chancellor Nishan Basmajian, Archbishop Najarian participated in the bi-annual meeting of the Heads of Churches of the NSW Ecumenical Council, which took place in the newly built Indian Bethel Mar Thoma Church, Horsley Park. After the opening prayer of Very Reverend Father Anastasios Bozikis, the Chairman of the Council, and the welcome of the host Reverend Eapen Mathew, the meeting proceeded to discuss the agenda. The General Secretary David Rose presented the report on the Council's half-yearly activity and the meeting participants found it valuable. They each gave an update in relation to the activities of their respective Churches.





The Council's New Strategic Plan proposed by the Executive Committee was also presented to the meeting, the content of which was approved by everyone. During the break, Reverend Eapen Mathew led the congregation to Bethel Mar Thoma Church and gave an explanation about the Church and the Mar Thoma ritual, which is performed in the Malayalam language. Reverend Dr. Manas Ghosh, Pastor of the Wahroonga Uniting Church, presented an address to the congregation on the topic "The importance of inter-religious dialogue" (Importance of Interfaith Dialogue). At the direction of His Eminence, we publish the interesting report of Reverend Dr. Ghosh in the English section entitled: Importance of Interfaith

Dialogue, (see page 21). An exchange of opinions took place and constructive suggestions were made. This successful meeting was closed with the prayer of His Eminence Archbishop Haigazoun Najarian.

Tuesday 4 June – Two weeks after the Diocesan General Assembly, the monthly Diocesan Council meeting was held in the evening under the presidency of Archbishop Najarian. The participants heard the monthly reports and proposals of His Eminence, Parish Priests, and Chairpersons of the three Parish Councils in Australia. A general assessment was made of the Diocesan Assembly held in Melbourne on 18 May 2024. Reflecting on the cocktail function held in honour of the “Friends of the Diocese”, the meeting participants expressed satisfaction and praised the organisation of the event. They also expressed their appreciation for the work performed on behalf of the Diocese in the community and in ecumenical fields.



Wednesday 5 June – Before noon, His Eminence presided over a consultative meeting held between representatives of the Diocesan Council, the Diocesan Properties Council and the Ararat Centre Committee. The meeting decided to implement a program in relation to the revitalisation of the Ararat Centre.

Wednesday 5 June – Accompanied by Chancellor Nishan Basmajian, His Eminence enjoyed the hospitality of the Head of the Coptic Church Bishop Daniel at the *Kickin Inn* restaurant. Most of the church leaders of AMEC were present. In the atmosphere of Christian love, the heads of churches discussed various issues related to the Christian Churches of the Middle East and made constructive and practical proposals. A topic of discussion was the upcoming celebration of the 1700th anniversary of the Ecumenical Council of Nicaea in 2025. Let's remember that it was at that Ecumenical Council that the Nicene Creed was ratified (Faith in one God...). This gathering was a valuable initiative by Bishop Daniel.





Saturday 8 June – His Eminence, as the Pontifical Legate of India and the Far East, upon the invitation of the guardian body of Singapore’s St Gregory the Illuminator Armenian Apostolic Church, travelled to Singapore and celebrated Holy Mass on Sunday, 9 June 2024, in the presence of a congregation of about fifty faithful. His Eminence also performed a baptism. He returned to Sydney on 11 June.

Saturday 8 June – Representing Archbishop Najarian, Chancellor Nishan Basmajian attended a lunch organised by the Eastern Christian Welfare Australia (ECWA) in the hall of the Melkite Catholic Diocese located in Greenacre, to welcome those families who immigrated from Syria and Lebanon within the last six months. This institution operates under the

